ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՄԱԿԱՐՅԱՆ ԱՆՆԱ ՌՈՒԶՎԵԼՏԻ

# ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ԽՈՑԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Ը.00.02 - «Տնտեսության, նրա առանձին ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության սեղմագիր

ԵՐԵՎԱՆ - 2016

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտում:

***Գիտական ղեկավար՝*** ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր **Հարությունյան Վլադիմիր Լիպարիտի**

***Պաշտոնական ընդդիմախոսներ՝*** տնտեսագիտության դոկտոր **Գրիգորյան Լիանա Հայկազի**

տնտեսագիտության թեկնածու **Առաքելյան Կարապետ Հովհաննեսի**

***Առաջատար կազմակերպություն՝*** **Երևանի պետական համալսարան**

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2016 թվականի հունիսի 23-ին, ժամը 14$^{00}$-ին Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում գործող ՀՀ ԲՈՀ-ի տնտեսագիտության թիվ 014 մասնագիտական խորհրդում:

Հասցեն՝ 0025, ք. Երևան, Նալբանդյան 128:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2016թ. մայիսի 23-ին:

014 մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար,
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր **Ս.Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ**

## ԱՏԵՆԱԽՏՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

***Ատենախտսության թեմայի արդիականությունը:*** Ըստ Արժույթի միջազգային հիմնադրամի դասակարգման՝ եկամտի ցածր մակարդակ ունեցող երկրներում, ինչպիսին Հայաստանն է, տնտեսության իրական և արտաքին հատվածի միջև կապը նկարագրող գործոնները (ապրանքների և ծառայությունների արտահանում, օտարերկրյա ուղղակի ներդրումներ (ՕՈՒՆ), տրանսֆերտներ, հանքահումքային մթերքի և ոչ թանկարժեք մետաղների գներ և այլն) ինչպես երկրի տնտեսական աճի, այնպես էլ տնտեսության մակրոտնտեսական խոցելիության աղբյուր են: ՕՈՒՆ-ների ներգրավումը կարող է մեծացնել համախառն կուտակման ծավալը, ինչն էլ իր հերթին կապահովի իրական ՀՆԱ-ի ավելի բարձր աճի տեմպեր: Ապրանքների արտահանման ծավալների աճն կարող է ավելացնել իրական ՀՆԱ-ում վերջիններիս ստեղծած ավելացված արժեքը, ինչպես նաև գործատուներին հնարավորություն տալ աշխատակիցներին ավելի բարձր աշխատավարձ և ավելի շատ հարկեր վճարել: Տրանսֆերտների ծավալների աճը, որն ուղղվում է երկարաժամկետ օգտագործման ապրանքների ձեռքբերման և ընթացիկ սպառման վրա ՀՆԱ-ի տարբեր ծախսային բաղադրիչների միջոցով ապահովում է տնտեսական աճ: Իսկ հանքահումքային մթերքի և ոչ թանկարժեք մետաղների գների բարձրացումն ավելացնում է արտահանող ընկերությունների հասույթը: Հետևաբար՝ այս ցուցանիշների ծավալների փոփոխությունը բացասաբար է անդրադառնում տվյալ երկրի տնտեսական աճի վրա, որոնցով էլ պայմանավորված է երկրի մակրոտնտեսական խոցելիությունը: Մյուս կողմից երկրի մակրոտնտեսական խոցելիությունը պայմանավորված է նրանով, որ այս գործոնները որոշակիորեն մեղմում են, ինչպես նաև կրճատում են ընթացիկ հաշվի պակասուրդը, իսկ վերջիններիս ծավալների փոփոխությունը կարող է էլ ավելի մեծացնել ընթացիկ հաշվի պակասուրդը՝ հանգեցնելով ազգային արժույթի արժեզրկման կամ արժութային ճգնաժամի, որը կարող է նաև վերածվել ֆինանսատնտեսական ճգնաժամի եկամտի ցածր մակարդակ ունեցող երկրներում, որն էլ իր հերթին խիստ բացասաբար կանդրադառնա տվյալ երկրի տնտեսության իրական հատվածի վրա:

2009թ.-ին ՀՀ-ում գրանցված արժութային ճգնաժամը, որը վերածվեց ֆինանսատնտեսական ճգնաժամի, փաստեց այն, որ ՀՀ տնտեսության իրական հատվածի զարգացումը զերծ չէ արտաքին տնտեսական գործոնների կամ շոկերի ազդեցությունից: ՀՀ տնտեսության վրա խիստ բացասաբար ազդեցին վերը թվարկված գործոնները, ինչպես նաև ՀՀ անշարժ գույքի շուկայի բացասական զարգացումները, որոնք էլ,

իրենց հերթին, ավելի խորացրին համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի բացասական ազդեցությունը ՀՀ տնտեսության վրա: 2014թ.-ի երկրորդ կեսին ՌԴ-ում գրանցված արժութային ճգնաժամը հանգեցրեց տրանսֆերտների, արտահանման ծավալների կրճատմանը, որը ևս մեկ անգամ մատնանշեց ՀՀ տնտեսության մակրոտնտեսական խոցելիության հիմնախնդիրների և վերջինս նկարագրող ցուցանիշների ուսումնասիրության և կարգավորման ուղիների առաջարկման անհրաժեշտությունը, ինչն էլ թույլ կտա բարձրացնելու տնտեսության ճկունության աստիճանը՝ արտաքին շոկերի նկատմամբ: Իր հերթին ՀՀ մակրոտնտեսական խոցելիությունը նկարագրող ցուցանիշների վերլուծությունը, իրական ՀՆԱ-ի վրա արտաքին շոկերի գնահատականը հնարավորություն կտան նաև ուրվագծել հակաճգնաժամային միջոցառումների շրջանակը, որը կարող է իրականացնել ՀՀ կառավարությունը, եթե միջնաժամկետ հատվածում արտաքին շոկերով պայմանավորած տնտեսական անկում գրանցվի:

Ատենախոսության թեմայի ընտրությունը, որում տրված են վերը նշված գնահատականները, ուսումնասիրված են վերը թվարկված խնդիրները և առաջարկված են լուծումներ պայմանավորում է ատենախոսության թեմայի արդիականությունը:

***Հետազոտության նպատակը և խնդիրները:*** Ատենախոսության հիմնական նպատակը ՀՀ տնտեսության մակրոտնտեսական խոցելիության հիմնախնդիրների ուսումնասիրությունն ու դրանց կարգավորման ուղիների առաջարկելն է միջնաժամկետ և երկարաժամկետ հատվածներում: Այս նպատակին հասնելու համար ատենախոսությունում դրվել և լուծվել են հետևյալ խնդիրները.

- ուսումնասիրել եկամտի ցածր մակարդակ ունեցող երկրներում արտաքին տնտեսական գործոնների և տնտեսության իրական հատվածի կապը մակրոտնտեսական խոցելիության համատեքստում,
- դիտարկել մակրոտնտեսական խոցելիությունը բնութագրող գործոնների համախումբը և դրանց ազդեցությունը ֆինանսական ճգնաժամերի վրա, ինչպես նաև դրա գնահատման հիմնական մոտեցումները ՀՀ-ում և արտերկրում,
- ներկայացնել ՀՀ տնտեսության մակրոտնտեսական խոցելիությունը նկարագրող հիմնական ցուցանիշները,
- իրականացնել ՀՀ տնտեսական աճը պայմանավորող գործոնների վիճակագրական վերլուծություն՝ մակրոտնտեսական խոցելիության համատեքստում,
- ուսումնասիրել ՀՀ տնտեսության իրական հատվածի և արտաքին տնտեսական գործոնների կապը, ինչպես նաև

գնահատել վերջինիս ազդեցությունը ՀՀ տնտեսական աճի վրա,
- վերլուծել տնտեսության ճկունության աստիճանի բարձրացման հնարավոր ուղիները՝ ՀՀ մակրոտնտեսական խոցելիությունը նվազեցնելու համար:

***Հետազոտության օբյեկտը և առարկան:*** Ատենախոսության ուսումնասիրության օբյեկտը ՀՀ իրական հատվածի վրա արտաքին տնտեսական գործոնների ազդեցության վերլուծությունն է, իսկ առարկան՝ ՀՀ տնտեսության ճկունության աստիճանի բարձրացման ուղիների բացահայտումը:

***Ուսումնասիրության տեսամեթոդական և տեղեկատվական հիմքերը:*** Ատենախոսությունում առաջադրված խնդիրների լուծման համար գիտամեթոդական և տեսական հիմք են հանդիսացել մակրոտնտեսագիտության և միկրոտնտեսագիտության, արտաքին տնտեսական կապերի և կառավարման դասական և ժամանակակից տեսությունները, դրանց հիմնադրույթները, մեթոդները, մոտեցումները, երկրի մակրոտնտեսական խոցելիության բացահայտման և գնահատման, տնտեսության ճկունության աստիճանի բարձրացման, ներդրումների ներգրավման վերաբերյալ հայ և օտարերկրյա գիտնականների ու հետազոտողների և միջազգային կառույցների կողմից հրապարակվող վերլուծությունների ու հետազոտությունները:

Ատենախոսությունում կատարված ուսումնասիրության համար տեղեկատվական հիմք են հանդիսացել՝ ՀՀ օրենսդրական և ենթաօրենսդրական իրավական ակտերը, միջազգային իրավական փաստաթղթերը (Եվրասիական տնտեսական միության և ԱՊՀ շրջանակում գործող), ՀՀ ԱՎԾ-ի, ՀՀ ԿԲ-ի, ՀՀ էկոնոմիկայի, ՀՀ ֆինանսների նախարարությունների, ինչպես նաև միջազգային կառույցների և այլ պետական հաստատությունների կողմից հրապարակվող վիճակագրական, վերլուծական նյութերը, զեկույցները, առցանց տվյալների բազաները և պաշտոնական կայքերում տեղադրված տարբեր նյութերը:

Ատենախոսության մեջ ներկայացված հետազոտությունում կիրառվել են տնտեսաչափական, վիճակագրական, համեմատական վերլուծություններ և այլ մեթոդներ ու մոտեցումներ:

***Ատենախոսության հիմնական գիտական արդյունքները և նորույթը:*** Ատենախոսությունում կատարված ուսումնասիրությունների և վերլուծությունների արդյունքում ստացվել են տեսական, մեթոդական և գործնական մի շարք արդյունքներ, որոնցից հիմնականները կայանում են հետևյալում.

- Մշակվել են հայեցակարգային մոդելներ եկամտի ցածր մակարդակ ունեցող երկրների, ինչպես նաև ՀՀ տնտե-

սության իրական հատվածի վրա արտաքին շոկերի բացասական ազդեցության տարածման գործընթացը ներկայացնելու նպատակով:

- Հիմնավորվել են միջնաժամկետ հատվածում իրական ներմուծման ծավալների փոփոխության վրա ազդող գործոնները, ինչպես նաև բացահայտվել են ՀՀ իրական ՀՆԱ-ի աճի տեմպին նպաստող և արտադրողականության աճը պայմանավորող գործոնները, որի հիման վրա էլ առաջարկվել է ցածր և միջին տեխնոլոգիական ոլորտներում ներգրավել «արդյունավետություն և միաժամանակ շուկա փնտրող» ՕՈԻՆ-ներ:
- ՀՀ տնտեսության ճկունության աստիճանի բարձրացման նպատակով առաջարկվել է հակաճգնաժամային և այլ միջոցառումների համալիր (գործազրկության նպաստի վճարումը ճգնաժամերի դեպքում, երկրի բրենդինգի ռազմավարության մշակում, ԵԱՏՄ ինտեգրացիոն ներուժի իրացմամբ՝ դիվերսիֆիկացված տարածաշրջանային զարգացում)՝ տնտեսական զարգացման հիմքի ավելի լայն բազմազանության ապահովման ուղղությամբ:

***Հետազոտության արդյունքների գործնական նշանակությունը և օգտագործումը:*** Ատենախոսությունում ներկայացված վերլուծության արդյունքները, մշակված առաջարկությունները կարող են կիրառվել ՀՀ կառավարության, Հայաստանի զարգացման հիմնադրամի, ՀՀ ֆինանսների, ՀՀ էկոնոմիկայի և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունների կողմից՝ երկրի սոցիալ-տնտեսական զարգացման քաղաքականության մաս կազմող տարբեր քաղաքականությունների մշակման ժամանակ:

Ատենախոսությունում ներկայացված տեսական և գործնական արդյունքները կարող են օգտագործվել հակաճգնաժամային միջոցառումների մշակմամբ, ՀՀ տնտեսական աճի, տնտեսության իրական հատվածի, ԵԱՏՄ շրջանակներում ինտեգրացիոն ներուժի իրացման հիմնահարցերով զբաղվող հետազոտողների, տնտեսագետների, վիճակագիրների և ասպիրանտների կողմից:

***Ատենախոսության արդյունքների փորձարկումը և հրապարակումները:*** Ատենախոսության հիմնական արդյունքները քննարկվել են ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտում: Ատենախոսության հիմնական արդյունքներն ու բովանդակությունը արտացոլված են հեղինակի կողմից հրապարակված 11 (տասնմեկ) գիտական հրապարակումներում:

***Ատենախոսության կառուցվածքը և ծավալը:*** Ատենախոսությունը բաղկացած է առաջաբանից, երեք գլուխներից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածներից: Ատենախոսությունը

շարադրված է 177 էջի վրա՝ ներառյալ օգտագործված գրականության ցանկը:

## ԱՏԵՆԱԽՏՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

***Առաջաբանում*** հիմնավորվել է թեմայի արդիականությունը, սահմանվել են հետազոտության նպատակը և խնդիրները: Ներկայացվել են հետազոտության օբյեկտը և առարկան, տեսական և տեղեկատվական հիմքերը, գիտական նորույթը և ստացված արդյունքների գործնական նշանակությունը:

***Ատենախոսության առաջին՝ «Մակրոտնտեսական խոցելիության տեսամեթոդական հիմքերը», գլխում*** ներկայացվել է եկամտի ցածր մակարդակ ունեցող երկրներում արտաքին տնտեսական գործոնների և տնտեսության իրական հատվածի կապը մակրոտնտեսական խոցելիության համատեքստում, մակրոտնտեսական խոցելիությունը բնութագրող գործոնների համախումբը և դրանց ազդեցությունը ֆինանսական ճգնաժամերի վրա, ինչպես նաև վերջինիս գնահատման մոտեցումները:

Տրվել են երկրի մակրոտնտեսական խոցելիության Վ. Նաուդեի և այլոց, Պ. Գվիլաումոնթի, Լ. Բրիգուգլիոյի և այլոց սահմանումները[1], որը համապարփակ ձևով կարող է բնորոշվել որպես *արտաքին շոկերի (արտաքին պահանջարկի կտրուկ կրճատում, մետաղների, հանածոների և գյուղմթերքի անկայուն գներ) հանդեպ տնտեսության անպաշտպանվածություն, որը հանգեցնում է երկրի զարգացման խոչընդոտմանը:*

Եկամտի ցածր մակարդակ ունեցող երկրներում այլ երկրներից տնտեսության իրական հատվածի վրաբացասական ազդեցության տարածման դոմինանտուղիներն արտացոլում են տնտեսության իրական հատվածի և արտաքին տնտեսական գործոնների միջև կապը (առևտուր, օտարերկրյա ուղղակի ներդրումներ (ՕՈԻՆ), տրանսֆերտներ, արտասահմանից ստացվող օգնություն և այլն), իսկ որպես ոչ դոմինանտ ուղի նշվում են այն հոսքերը, որոնք ուղղվում են դեպի ֆինանսական հատված: Ընդհանուր արտաքին շոկերը (համաշխարհային տնտեսության ռեցեսիան, մետաղների, հանածոների և գյուղմթերքի համաշխարհային գների անկումը և այլ), տարբեր երկրների դեպքում տարբեր կերպ են

[1] Wim Naude´, Amelia U. Santos-Paulino & Mark Mcgillivray (2009). “Measuring Vulnerability: An Overview and Introduction,” *Oxford Development Studies*, Routledge (Abingdon, Oxfordshire: United Kingdom), Vol. 37, No. 3, pp.184-185: Guillaumont, Patrick (2009). “An Economic Vulnerability Index: Its Design and Use for International Development Policy” *Oxford Development Studies*, Routledge (Abingdon, Oxfordshire: United Kingdom), Vol. 37, No. 3, p.195: Briguglio, Lino, Cordina, Gordon, Farrugia, Nadia, and Vella, Stephanie (2009). “Economic Vulnerability and Resilience: Concepts and Measurements”, *Oxford Development Studies, Routledge (Abingdon, Oxfordshire: United Kingdom)*, Vol. 37, No. 3, pp.229, 231-232.

դրսևորվում կախված նրանից, թե ինչպիսին է տվյալ երկրի կախումը կոնկրետ շուկայից, այնտեղ իրացվող ապրանքից, մատակարարվող ծառայությունից կամ ֆինանսավորման աղբյուրներից[2]: Իսկ եկամտի ցածր մակարդակ ունեցող և եկամտի միջին մակարդակ ունեցող «առաջատար» (տարածաշրջանի առումով «համակարգային» երկրներ, ինչպիսին են Բրազիլիան, ՌԴ-ն, Չինաստանը, ՀԱՀ-ն և այլն) համարվող երկրների միջև խորացող առևտրային և ֆինանսական կապերը հանգեցնելու են այդ երկրների գործարար ցիկլերի սինխրոնացման, ինչպես նաև հանդես են գալու որպես մակրոտնտեսական խոցելիության աղբյուր[3]: Այդ ամենի արդյունքում հեղինակի կողմից առաջարկվել է հայեցակարգային մոդել, որի միջոցով կարելի է համապարփակ ձևով ներկայացնել արտաքին շոկերի (ինչպես ընդհանուր, այնպես էլ երկրին բնորոշ) ազդեցությունն եկամտի ցածր մակարդակ ունեցող երկրների տնտեսության իրական հատվածի վրա (գծապատկեր 1):

Ներկայացվել է, որ տնտեսական աճի վրա ֆինանսական ճգնաժամերի ազդեցությունն ավելի մեծ է, քան սովորական ռեցեսիայի ժամանակ, իսկ վերականգնումն էլ ավելի դանդաղ է ընթանում: Իսկ եկամտի միջին մակարդակ ունեցող երկրներում արձանագրված ռեցեսիաների մեծ մասը պայմանավորված է եղել ֆինանսական ճգնաժամերի առաջացմամբ, որոնց, որոշ դեպքերում, նախորդել են վարկային բումները, արժեթղթերի գների և անշարժ գույքի գների մեծ չափերի հասնող աճը, որոշ երկրների ընթացիկ հաշվի պակասուրդը, որոնք էլ համարվում են ընդհանուր ներքին շոկեր կամ էլ մակրոտնտեսական խոցելիությունը նկարագրող ներքին մակրոտնտեսական հիմքեր կամ ցուցանիշներ: Այս գործոնների առկայությունն ավելի խոցելի է դարձնում երկիրը արտաքին շոկերի հանդեպ: Իսկ մակրոտնտեսական ցուցանիշներից կամ հիմքերից մեկի՝ ընթացիկ հաշվի պակասուրդի ֆինանսավորման, պահպանման, կամ մեղմացման աղբյուրների փոփոխությունը պայմանավորում է, թե ո՞ր տեսակի ճգնաժամը կարող է տեղի ունենալ տվյալ երկրում, և հատկապես ո՞ր տեսակի ճգնաժամերը կարող են հաջորդել դրան: Ճգնաժամերի փոխանցման կամ տարածման ժամանակ գործոններից յուրաքանչյուրը տարբեր կերպ է ազդում երկրի տնտեսության վրա՝ ընդհանուր շոկի և երկրի մակրոտնտեսական հիմքերի զուգորդմամբ, արտաքին տնտեսական գործոնների և տնտեսության իրական հատվածի

[2] International Monetary Fund (2011). “Managing Volatility-A Vulnerability Exercise for Low-Income Countries.” The International Monetary Fund, Washington, D.C.: United States, p.11, (available at: www.imf.org/external/np/pp/eng/2011/030911.pdf, last accessed: February 27, 2015).

[3] Dabla-Norris, Era, Espinoza, Raphael, Jahan, Sarwat (2012). “Spillovers to Low-Income Countries: Importance of Systemic Emerging Markets”, IMF working paper No. 12/49, The International Monetary Fund, Washington, D.C.: United States, pp. 12, 23.

կապերով, ինչպես նաև ֆինանսական հատվածի միջազգային ինտեգրվածության աստիճանով պայմանավորված:

Ներկայացվել են մակրոտնտեսական խոցելիության գնահատման տարբեր մոտեցումներ, որոնց հիման վրա պարզ է դառնում, որ յուրաքանչյուր երկրի մակրոտնտեսական խոցելիությունը որոշելու համար անհրաժեշտ է տնտեսության մանրամասն վերլուծություն, որտեղ ներառված են լինելու ինչպես տնտեսության խոցելիության աստիճանը արտաքին շոկերի հանդեպ, այնպես էլ մակրոտնտեսական հիմքերը կամ ցուցանիշները:




***Գծապատկեր 1.*** *Եկամտի ցածր մակարդակ ունեցող երկրների տնտեսության իրական հատվածի խոցելիությունն արտաքին շոկերի հանդեպ և դրանց տարածումը*

***Առնախտության երկրորդ՝ «Մակրոտնտեսական խոցելիության հիմնախնդիրները և դրանք պայմանավորող գործոնները», գլխում*** վերլուծվել են տնտեսության մակրոտնտեսական խոցելիությունը նկարագրող ցուցանիշները, տնտեսական աճը պայմանավորող գործոնները մակրոտնտեսական խոցելիության համատեքստում, ինչպես

նաև տնտեսության իրական հատվածի և արտաքին տնտեսական գործոնների կապը:

Տնտեսության մակրոտնտեսական խոցելիությունը նկարագրող ցուցանիշի՝ ընթացիկ հաշվի պակասուրդ/ՀՆԱ հարաբերակցության վերլուծության արդյունքում բացահայտվեց, որ ՀՀ-ում 2007-2008թթ. ընթացիկ հաշվի պակասուրդ/ՀՆԱ հարաբերակցությունը մատնանշում էր ֆինանսատնտեսական ճգնաժամի առաջացման վտանգը, իսկ 2011-2014թթ. ցուցանիշը բարձր էր ՀՀ վճարունակության և արտաքին պարտքի կայունության, ինչպես նաև երկարաժամկետ կայուն մակարդակի համար անհրաժեշտ չեմից: Թեպետ 2013-2014թթ. ցուցանիշը ցածր էր արժութային և տնտեսական ճգնաժամերի առաջացման շեմից, սակայն ՀՀ-ում արժութային ճգնաժամ կարող է առաջանալ ավելի ցածր մակարդակի դեպքում ևս՝ հաշվի առնելով արտաքին տնտեսական գործոնների և տնտեսության իրական հատվածի կապը: Ինչ վերաբերում է ընթացիկ հաշվի պակասուրդի պահպանմանը 2011-2014թթ., ապա ՕՈՒՆ-ների ներհոսքը դա չէր կարող ապահովել, և այն հիմնականում ֆինանսավորվել էր մասնավոր հատվածի կողմից, ինչն էլ հանգեցրեց արտաքին պարտքի մեծացմանը: Իսկ, ընդհանուր առմամբ, մասնավոր ֆինանսական հաստատությունների և այլ հատվածների համախառն արտաքին պարտքի տարեկան դիրքերը միասին 2014թ.-ին կազմում էին 3.6 մլրդ ԱՄՆ դոլար, մինչդեռ այս ցուցանիշը 2010թ.-ին կազմում էր 2.23 մլրդ ԱՄՆ դոլար[4]: Վերջինս հիմնականում բացատրվում էր սպառման բարձր մակարդակով, համախառն ներքին խնայողությունների մակարդակի փոփոխությամբ 2010-2014թթ., որի վրա էլ ազդել էին եկամտի առաջնային աղբյուր հանդիսացող՝ իրական աշխատավարձերի աճի տեմպը: Իսկ համադրելով 2011-2014թթ. ՀՆԱ-ի, տնտեսության ոլորտների իրական տարեկան աճի տեմպերը, տնտեսության հիմնական ճյուղերի նպաստումները ՀՆԱ-ի իրական աճի տեմպին, հիմնական միջոցների համախառն կուտակման մեջ մասնավոր հատվածի մասնակցության չափը, ՕՈՒՆ-ների կառուցվածքը, արդյունաբերական արտադրանքի ծավալի ինդեքսներն, արտահանման կառուցվածքի հետ (ապրանքներ և ծառայություններ), կարելի է եզրակացնել, որ ՀՆԱ-ի իրական աճին նպաստել են այն ոլորտները, որոնք տեխնոլոգիաների տեսանկյունից հիմնականում չեն համարվում կապիտալատար: Իսկ սա նշանակում է, որ մասնավոր հատվածի ներդրումները հիմնականում իրականացվել են արտահանող ընկերությունները և, այն ընկերությունները (ներառյալ օտարերկրյա կապիտալով), որոնց ճյուղերում (ներքին շուկայում) առկա է եղել ուժեղ մրցակցություն: 2012-2014թթ.

[4]ՀՀ ԱՎԾ արտաքին հաշվների «Համախառն արտաքին պարտք 6» առցանց տվյալների բազա առ. 30.06.2015թ. (http://www.armstat.am/am/?nid=443):

համախառն ներքին խնայողությունների բացասական ցուցանիշի պարագայում վիճակը հնարավոր է մեղմել օտարերկրյա ներդրումների ներհոսքի աճով, ինչն էլ կարող է ընթացիկ հաշվի պակասուրդի պահպանման հարցը լուծել: Իսկ ընթացիկ հաշվի պակասուրդի կրճատման կամ պահպանման նպատակով ռազմավարական ուղղությունների ընտրության տեսանկյունից վերլուծվել է վերջինիս կառուցվածքը, գնահատվել են ՀՆԱ-ի հիմնական ծախսային բաղադրիչների ազդեցությունը ապրանքների ու ծառայությունների իրական ներմուծման վրա՝ նախքան Համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամը և 2000-2014թթ. եռամսյակային տվյալների կտրվածքով: Երկու գնահատման արդյունքների հիման վրա ապրանքների և ծառայությունների արտահանման, ինչպես նաև հիմնական միջոցների համախառն կուտակման կտրվածքով կարելի է եզրակացնել և ակնկալել հետևյալը՝

1. Ներմուծվող ապրանքների (կամ ծառայությունների) օգտագործմամբ ՀՀ-ում ստեղծվող և արտահանման համար նախատեսված ապրանքների կամ մատուցվող ծառայությունների միջոցով ստեղծված ավելացված արժեքն աճել է: Իսկ այս համատեքստում ՀՀ կառավարության տնտեսական քաղաքականության առաջնահերթությունները կարող են լինել հետևյալը՝

- Արտահանման կառուցվածքի պահպանման դեպքում՝ դեպի զարգացած երկրներ արտահանման ծավալների աճի խթանումը (հատկապես ԵՄ)՝ միջնաժամկետ հատվածից սկսած, ինչը կմեծացնի ՀՀ-ում ստեղծվող ավելացված արժեքի մեծությունը, ինչպես նաև ավելի բարձ ավելացված արժեք ստեղծող ապրանքների արտադրության վրա կենտրոնացումը (տվյալ ոլորտների և կառուցվածքի շրջանակում):
- Գիտատար, բարձր տեխնոլոգիական ոլորտների զարգացմանը (որի հիմքերը կդրվեն կարճաժամկետ-միջնաժամկետ հատվածում) զուգահեռ այդ ոլորտների արտահանման ծավալների աճի խթանումը երկարաժամկետ հատվածում:

2. Ներդրումներն ուղեկցվել են տեղական արտադրության ապրանքների (կամ ծառայությունների) օգտագործման ծավալների որոշակի աճով: Իսկ միջնաժամկետ հատվածում ներդրումների փոփոխությունը, որը հանգեցնելու է իրական ներմուծման ծավալների փոփոխությանը (այլ հավասար պայմանների դեպքում) պայմանավորված կլինի նրանով, թե կկարողանա արդյո՞ք ՀՀ-ն ներգրավել հատկապես «արդյունավետություն փնտրող» օտարերկրյա ընկերություններ, որոնց նպատակն է մուտք գործել հատկապես տարածաշրջանային (ԵԱՏՄ, Իրան) շուկա, ինչպես նաև արտադրողականությամբ ճշգրտված ՀՀ աշխատուժի համեմատաբար ցածր վարձատրությունից օգտվելու

ցանկություն ունեցող և ՀՀ-ում դուստր ձեռնարկությունների կամ մասնաճյուղերի բացման ճանապարհով գլխամասային գրասենյակների արտապատվիրված աշխատանքներ իրականացնող ընկերություններ (հատկապես ԵՄ–ից), ինչպես նաև նրանով, թե ինչպե՞ս կփոխվեն արտահանման կառուցվածքը և ծավալները, և ինչպիսի՞ն կլինի մրցակցությունը ՀՀ տնտեսության տարբեր ճյուղերում:

Հետևաբար, միջնաժամկետ հատվածում ՀՀ ընթացիկ հաշվի պակասուրդի պահպանման կամ կրճատման համար կառավարությունը կանգնած է երկու ռազմավարական ընտրության առջև՝

1. Կառավարության արտահանման խթանմանն ուղղված միջոցառումների շնորհիվ արտահանման ծավալների աճի ապահովում հատկապես վերը ներկայացված երկու ուղղություններից առաջինի ընտրությամբ, որը կարող է ուղեկցվել ՕՈԻՆ-ների ներգրավմամբ, ինչը հնարավորություն կտա պահպանել փոխարժեքի կայունությունը և ապահովել արտաքին պարտքի սպասարկումը:

2. Օտարերկրյա ընկերությունների ներգրավում, որը պետք է լինի թիրախավորված: Օտարերկրյա ընկերությունների ներգրավումը կնպաստի միայն ընթացիկ հաշվի պակասուրդի առկա մակարդակի պահպանմանը, մինչդեռ հետագայում արտահանման մտադրությամբ «ռեսուրս», «արդյունավետություն փնտրող» օտարերկրյա ընկերությունների ներգրավման դեպքում նախ կպահպանվի ընթացիկ հաշվի պակասուրդի առկա մակարդակը, իսկ այնուհետև կնպաստի արտահանման ծավալների աճին, ինչն էլ իր հերթին կհանգեցնի ընթացիկ հաշվի պակասուրդի կրճատմանը:

Եթե միջնաժամկետ հատվածում պետական հիմնարկների վերջնական սպառման ծախսերի կրճատումը նաև ուղեկցվի ներմուծման փոխարինման ավելացմամբ՝ տեղական արտադրության ապրանքներով, ապա իրական ներմուծման ծավալները որոշակիորեն կնվազեն (այլ հավասար պայմանների դեպքում): Իսկ տնտեսության անկման հետևանքով պետական բյուջեից ծառայությունների և ապրանքների ձեռք բերման վրա ծախսվող գումարների իրական աճն, ինչպես տեղի էր ունեցել 2009թ.՝ կհանգեցնի ապրանքների և ծառայությունների իրական ներմուծման ծավալների ավելացման: 2013-2014թթ. տնային տնտեսությունների վերջնական սպառման ծախսերի աճի տեմպերը փաստել էին այն մասին, որ եթե տնային տնտեսությունների իրական եկամուտները զգալիորեն չաճեն, վերջնական սպառման ծախսերը կամ կպահպանվեն տվյալ մակարդակի վրա, կամ կաճեն ոչ մեծ չափերով, ինչը նշանակում է, որ այս ծախսային բաղադրիչի ծավալների աճը միջնաժամկետ հատ-

վածում չի հանգեցնի իրական ներմուծման ծավալների կտրուկ փոփոխության, իսկ կրճատումն (կախված տնտեսության զարգացումներից) կհանգեցնի իրական ներմուծման ծավալների կրճատման:

Ինչ վերաբերում է ՀՀ մակրոտնտեսական խոցելիությունը նկարագրող այլ մակրոտնտեսական հիմքերին, վերլուծության արդյունքում պարզվել է, որ ՀՀ առևտրային բանկերի կողմից տրամադրված վարկերի (տնային տնտեսություններին և մասնավոր ձեռնարկություններին) ծավալը (հատկապես արժութային) 2011-2014թթ. ընթացքում ավելի խոցելի էր դարձրել ՀՀ տնտեսությունն արտաքին շոկերի հանդեպ, իսկ վերջիններիս միջնաժամկետ հատվածում դրսևորման դեպքում երկրում արձանագրված ռեցեսիան կարող է ավելի երկար տևել՝ կախված ՀՀ S/S-ների և արտահանման շուկա հանդիսացող երկրների S/S-ների իրական եկամուտների փոփոխությունից (ՀՀ և այլ երկրների ազգային արժույթների արժեզրկման չափով պայմանավորված): Իսկ ընդհանուր առմամբ ձեռնարկությունների վարկունակության և մրցունակության բարձրացման տեսանկյունից արտադրողականությունն է լինելու այն վճռորոշ գործոնը, որը հնարավորություն կտա ձեռնարկություններին ավելի մեծ եկամուտներ ապահովել, ինչպես նաև մարել վարկերը, ինչն էլ իր հերթին պայմանավորված է ներդրումների ծավալների աճով:

2011-2014թթ. բնակարանների գների դինամիկան փաստում է այն մասին, որ ՀՀ-ում միջնաժամկետ հատվածում արտաքին շոկերով պայմանավորված տնտեսական անկումն ավելի չի խորանա այս ներքին շոկի կամ մակրոտնտեսական խոցելիությունը նկարագրող ցուցանիշի պատճառով:

Տնտեսական աճի աղբյուրների վիճակագրական վերլուծությունը բացահայտեց, որ 2004-2014թթ. ՀՆԱ-ի իրական աճի տեմպը հիմնականում պայմանավորված է եղել կապիտալի պաշարի իրական աճի տեմպերով, չնայած նրան, որ աճի տեմպերը որոշակիորեն դանդաղել էին, մինչդեռ 2001-2003թթ. այն հիմնականում պայմանավորված էր ընդհանուր գործոնային արտադրողականությամբ (գծապատկեր 2):

Արդյունքները նաև փաստել են կապիտալի պաշարի աճի տեմպի առնվազն պահպանելու մասին ճգնաժամից հետո ՀՆԱ-ի կառուցվածքում համախառն կուտակման մասնաբաժնի կրճատման պատճառով, որն էլ հիմնականում պայմանավորված էր մասնավոր հատվածի ներդրումների կրճատմամբ՝ շեշտադրելով ՕՈՒՆ-ների ներգրավման կարևորությունը և վերջինիս դերը տնտեսական աճի ապահովման գործում: Իսկ ընդհանուր առմամբ, 2011-2014թթ. ներդրումների ծավալների նվազման և ընդհանուր գործոնային արտադրողականության դրական աճի տեմպերի պայմաններում ներդրումները նպաս-

տում էին մեկ զբաղվածի հաշվով արտադրողականության դրական աճի տեմպին, որն էլ բացատրվում էր ինչպես զբաղվածների թվաքանակի կրճատմամբ, այնպես էլ այն հանգամանքով, որ կատարված ներդրումները հիմնականում նպաստում էին ավելի նպատակային և արդյունավետ գործընթացների կազմակերպմանը (գործառնական արդյունավետություն), ինչն էլ հանգեցրել էր զբաղվածների որակական հատկանիշների փոփոխությանը:

Իսկ եթե հաշվի առնենք այն հանգամանքը, որ 2011-2014թթ. ՀՆԱ-ի նկատմամբ զբաղվածության առաձգականության գործակիցը եղել է բացասական, ապա արտադրողականության աճը, ընդհանուր առմամբ, ոչ միշտ է հանգեցրել իրական աշխատավարձերի աճի, ինչն էլ նշանակում է, որ արտադրողականության աճը հիմնականում պայմանավորված է եղել որոշ զբաղվածների բարձր արտադրողականությամբ: Այս դեպքում կարևորվել է հիմնականում մշակող արդյունաբերության ոլորտների (աշխատատար) զարգացումը միջնաժամկետ հատվածում՝ հատկապես «արդյունավետություն փնտրող» օտարերկրյա ընկերությունների ներգրավմամբ:




***Գծապատկեր 2. ՀՀ տնտեսական աճի աղբյուրների վիճակագրական վերլուծության արդյունքները (2001-2014թթ.)***[5]

Հեղինակի կողմից տրվել է հայեցակարգային մոդել ՀՀ տնտեսության իրական հատվածի վրա արտաքին շոկերի տարածման առանձնահատկությունները ներկայացնելու նպատակով, որի հիման վրա էլ կատարվել է արտաքին շոկերի

[5]Հաշվարկներն իրականացվել են հեղինակի կողմից 1995-2014թթ. ժամանակահատվածի կտրվածքով կապիտալի պաշարի պարագայում, սակայն այստեղ ներկայացված են 2001-2014թթ. ժամանակահատվածի արդյունքները: Նշում՝ 2005=100, ըստ «ԱՀՀ 1993»-ի:

հանդեպ ՀՀ տնտեսության իրական հատվածի խոցելիության վերլուծություն:

Վերլուծության արդյունքները փաստում են այն, որ 2009թ.-ից սկսած ՀՀ տնտեսության խոցելիության աստիճանն աճել էր ՌԴ տնտեսությանն ավելի ինտեգրված լինելու հետևանքով, մասնավորապես, արտահանման (պատրաստի սննդի, բուսական և կենդանական ծագման արտադրանք, զբոսաշրջություն), աշխատավարձերի (սկզբնական եկամուտ) և անձնական տրանսֆերտների հետ կապված: Թանկարժեք և ոչ թանկարժեք մետաղների (քարերի) արտահանման տեսանկյունից ՀՀ իրական հատվածի խոցելիությունը հետագայում հիմնականում պայմանավորված է լինելու համաշխարհային տնտեսության զարգացումներով: 2014թ.-ի տվյալների համաձայն միջնաժամկետ հատվածում ՀՀ հանքագործական արդյունաբերության աճը որոշակիորեն կախված է լինելու նաև Չինաստանի տնտեսական աճի տեմպերից և զարգացումներից: Իսկ ԵՄ երկրների և Կանադայի տնտեսական աճի ավելի բարձր տեմպերը միջնաժամկետ հատվածում կբարձրացնեն ՀՀ հանքահումքային արտադրանքի, ոչ թանկարժեք և թանկարժեք մետաղների ու դրանցից պատրաստված իրերի նկատմամբ պահանջարկը: Ընդհանուր առմամբ, միջնաժամկետ հատվածում ՀՀ տնտեսության աճի տեմպերը հիմնականում պայմանավորված են լինելու ՌԴ տնտեսության աճի տեմպերով (արժութային ճգնաժամի հետևանքներով պայմանավորված), ինչը կմեծացնի հատկապես ՀՀ մշակող արդյունաբերության խոցելիության աստիճանը ՌԴ տնտեսական աճի նկատմամբ: Բուսական և կենդանաբանական արտադրանքի արտահանման տեսանկյունից ՀՀ գյուղատնտեսության ոլորտը մեծապես կախված է ոչ միայն ՌԴ տնտեսական աճի տեմպերից, այլև մի շարք բնակլիմայական երևույթներից: Միջնաժամկետ հատվածում ոչ թանկարժեք մետաղների և հումքի համաշխարհային գների տատանումներից են կախված լինելու այս ոլորտի արտադրանքների արտահանման ծավալները, քանի որ գների ոչ մեծ տատանումների ժամանակ արտահանողները կարող են ավելացնել արտահանման ֆիզիկական ծավալները՝ գների անկումը փոխհատուցելու նպատակով, մինչդեռ գների կտրուկ անկումը կարող է հանգեցնել արտահանման ծավալների զգալի կրճատման: Զբոսաշրջության ոլորտի զարգացման համար էապես կարևորվում են զարգացած երկրների տնտեսական աճի տեմպերը, քանի որ դրանք պայմանավորում են ՀՀ-ում մեկ այցելուի հաշվով իրականացված ծախսերի մակարդակը, որը 2012-2014թթ. կրճատվում էր «հայկական արմատներ ունեցող» այցելուների աճով պայմանավորված, որոնց մեծ մասը ՌԴ-ից էր:

***Առանձնության երրորդ՝ «Մակրոտնտեսական խոցելիության աստիճանի նվազեցման մոտեցումներն արդի***

***փուլում», գլխում*** գնահատվել են տնտեսության իրական հատվածի վրա արտաքին գործոնների վիճակագրորեն նշանակալի ազդեցությունը, որոնց հիման վրա առաջարկվել են կարգավորման ուղիներ: Առաջարկվել են նաև տնտեսության մակրոտնտեսական խոցելիության աստիճանի նվազեցման մոտեցումներ, ինչպես նաև տրվել են ԵԱՏՄ անդամակցության շրջանակում ՀՀ տնտեսության ճկունության աստիճանի բարձրացման հնարավոր ուղիները:

2006-2014թթ. եռամսյակային տվյալների գնահատման արդյունքները փաստում են, որ ՀՀ-ում զբոսաշրջիկների կողմից կատարվող ծախսերի փոփոխությունը հանգեցնում է իրական ՀՆԱ-ի վիճակագրորեն նշանակալի փոփոխության, իսկ ոլորտի հետագա զարգացման նպատակով հատկապես կարևորվել են երկու ռազմավարական ուղղություն:

Ապրանքների արտահանման հիմնական 4 խմբերը, որոնց մասնաբաժինը արտահանման կառուցվածքում 2003-2014թթ. տատանվել էր 79.6-87.1% միջակայքում տարբեր կերպ են բացատրել իրական ՀՆԱ-ի վիճակագրորեն նշանակալի փոփոխությունը (2003-2014թթ. եռամսյակային տվյալների գնահատման): Իրական ՀՆԱ-ի վրա «Ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր» և «Հանքահումքային մթերք» խմբերի վիճակագրորեն նշանակալի ազդեցության տարբերությունը բացատրվել էր նրանով, որ ՀՀ-ից հիմնականում արտահանվել է հումք, որի ավելացված արժեքը ՀՆԱ-ում բավականին ցածր է, մինչդեռ վերջինիս որոշակի վերամշակման դեպքում կարելի է մեծացնել ՀՀ-ում ստեղծված ավելացված արժեքը: Այդ իսկ պատճառով առաջարկվել է ավելացնել մետաղական արտադրության ծավալները, որը նաև կուղեկցվի մետաղական հանքագործության ոլորտի ծավալների կրճատմամբ՝ ավելի մեծ ավելացված արժեք ստեղծող ապրանքների արտադրությանն անցնելուն զուգընթաց, որն էլ կդասակարգվի որպես մետաղական արտադրություն:

2003-2012թթ. և 2003-2014թթ. եռամսյակային տվյալների հիման վրա գնահատման արդյունքում ստացված «Պատրաստի սննդի արտադրանքի» խմբի ծավալների 1 մլն ԱՄՆ դոլարով փոփոխությամբ առաջացած իրական ՀՆԱ-ի փոփոխության մեծությունների տարբերությունը (1.54 մլրդ ՀՀ դրամ 1.09 մլրդ ՀՀ դրամի համեմատ) արտացոլել էր 2013-2014թթ. խմբի կառուցվածքում տեղի ունեցած փոփոխությունը, ինչը նշանակում է, որ ծխախոտի արտահանման ծավալների աճով պայմանավորված խմբի արտահանման ծավալների փոփոխությունը, միջինում, իրական ՀՆԱ-ում նպաստում է ավելի քիչ ավելացված արժեքի ստեղծմանը: Առաջարկվել է խթանել այս խումբը ներկայացնող այն ապրանքների արտահանումը, որոնք նպաստում են իրական ՀՆԱ-ում ավելի մեծ ավելացված արժեքի ստեղծմանը:

Որոշակի առաջարկություններ են արվել «Թանկարժեք քարեր և մետաղներ» ապրանքների արտահանման խմբի կտրվածքով, որպեսզի այս խումբը սկսի ՀՆԱ-ի վրա վիճակագրորեն նշանակալի ազդեցություն թողնել միջնաժամկետ-երկարաժամկետ հատվածում:

Դեպի ՌԴ արտահանման ծավալների (ԱՄՆ դոլարով արտահայտված) փոփոխությունը t-րդ ժամանակահատվածում հանգեցնում է իրական ՀՆԱ-ի վիճակագրորեն նշանակալի փոփոխության t+1-րդ ժամանակահատվածում, իսկ ՌԴ իրական ՀՆԱ-ի (ՌԴ ռուբլով արտահայտված) փոփոխությունն իր հերթին հանգեցնում է ՀՀ-ից դեպի ՌԴ արտահանման ծավալների փոփոխությանը նույն ժամանակահատվածում: Իսկ t-րդ ժամանակահատվածում ՌԴ իրական ՀՆԱ-ի կրճատումը ՀՀ իրական ՀՆԱ-ի վրա վիճակագրորեն նշանակալի ազդեցություն է թողնում t+1-րդ և ՌԴ իրական ՀՆԱ-ի տատանումը, ընդհանուր առմամբ, բացատրում է ՀՀ իրական ՀՆԱ-ի տատանման մոտ 60%-ը:

Միջնաժամկետ հատվածում ՌԴ տնտեսական զարգացումներից ՀՀ գյուղատնտեսության, սննդի վերամշակման ոլորտների խոցելիության աստիճանի նվազեցման (դիվերսիֆիկացիայի ավելի լայն աստիճանի ապահովման) տեսանկյունից առաջարկվել է միջնաժամկետ հատվածում շարունակել տարբեր ապրանքատեսակների արտահանումը դեպի ՌԴ, իսկ արդեն երկարաժամկետ հատվածում դեպի ՌԴ արտահանման ծավալների ավելացմանը զուգընթաց անհրաժեշտ է ավելացնել նաև դեպի ԵՄ արտահանման ծավալները՝ ԵՄ կանոնակարգերին համապատասխան: Առաջարկվել է ԵՄ շուկաներում ՀՀ գյուղմթերքի առաջմղման մոտեցում:

2003-2013թթ. եռամյակային տվյալների հիման վրա գնահատման արդյունքները ցույց են տվել, որ ՌԴ-ից և այլ երկրներից տնտեսության իրական հատվածում կատարված ՕՈՒՆ-ների ծավալների (ՌԴ և այլ երկրներից ՕՈՒՆ-ների հանրագումարի) փոփոխությունը չէր բացատրում իրական ՀՆԱ-ի վիճակագրորեն նշանակալի փոփոխությունը, ինչը նշանակում է, որ կարևոր չէ, թե ո՞ր երկրից են իրականացվում ներդրումները, այլ կարևոր է, թե երկարաժամկետ հատվածում որքանո՞վ են այդ ներդրումները նպաստում ավելի բարձր ավելացված արժեքի ստեղծմանը, ինչպես նաև 2003-2014թթ. ՀՀ-ն ներգրավել էր հիմնականում «շուկա» և «ռեսուրս փնտրող» ընկերություններ, որոնք արդեն որպես ՀՀ ռեզիդենտ ընկերություններ ՀՀ-ում իրականացրել էին ստացված շահույթների վերաներդրում: Այս պարագայում անհրաժեշտ է կարճաժամկետ և միջնաժամկետ հատվածում ներգրավել հատկապես «արդյունավետություն փնտրող» օտարերկրյա ընկերություններ, որոնց նպատակն է մուտք գործել հատկապես տարածաշրջանային (ԵԱՏՄ, Իրան) շուկա, ինչպես նաև ՀՀ-ում դուստր ձեռնարկությունների կամ

մասնաճյուղերի բացման ճանապարհով գլխամասային գրասենյակների արտապատվիրված աշխատանքներ իրականացնող ընկերություններ:

2003-2014թթ. եռամսյակային տվյալների հիման վրա գնահատման արդյունքները փաստել են, որ ՀՀ իրական ՀՆԱ-ի վիճակագրորեն նշանակալի փոփոխության վրա ազդում են ինչպես անձնական տրանսֆերտները, այնպես էլ աշխատողների աշխատավարձերը, սակայն ժամանակահատվածը, ինչպես նաև միջին մեծության չափը տարբեր են (մնացած այլ հավասար պայմանների դեպքում): Անձնական տրանսֆերտների և աշխատավարձերի փոփոխությունը վիճակագրորեն նշանակալի ազդեցություն ունի ներմուծման վրա, իսկ անձնական տրանսֆերտների պարագայում՝ նաև տնային տնտեսությունների վերջնական սպառման ծախսերի վրա: Սակայն այստեղ առաջնային խնդիրը արտագնա աշխատանքի հնարավորությունն է: Իսկ անձնական տրանսֆերտների և աշխատողների վարձատրության կրճատման դեպքում ՀՆԱ-ի բաղադրիչներից ամենախոցելին է հանդիսանում հիմնական միջոցների համախառն կուտակումը:

2005թ. առաջին եռամսյակից մինչև 2014թ. երրորդ եռամսյակն ընկած ժամանակահատվածի տվյալների հիման վրա գնահատման արդյունքները փաստել են այն, որ առևտրային բանկերի կողմից ՀՀ S/S-ներին և մասնավոր ձեռնարկություններին տրամադրված վարկերի ծավալի հանրագումարի փոփոխությունը վիճակագրորեն նշանակալի ազդեցություն է թողնում ՀՀ իրական ՀՆԱ-ի վրա: Կարևորվել են ՀՀ կառավարության կողմից հատկապես մասնավոր ձեռնարկություններին տրամադրվող նոր վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորումը (հիմնական միջոցներին դասվող ապրանքների ձեռքբերման դեպքում) տնտեսական անկման դեպքերում:

Հաշվի առնելով հիմնականում ՌԴ տնտեսության, մետաղների միջազգային գների (Չինաստանի տնտեսության աճի տեմպով պայմանավորված) առնչվող ամենամյա ակնխատեսումները, յուրաքանչյուր տարի անհրաժեշտ է վերանայել այն հակաճգնաժամային միջոցառումների գործիքակազմը, որն անհրաժեշտության դեպքում կարող է կարգավորվել ստեղծված իրավիճակը: Միջոցառումները պետք է ուղղված լինեն տնային տնտեսությունների, ՀՀ տնտեսության առանձին ոլորտների վրա ՌԴ տնտեսության բացասական զարգացումների, մետաղների գների անկման հետևանքով ազդեցության մեղմացմանը: Ծրագրերը և միջոցառումները պետք է լինեն տարբերակված և արտացոլեն յուրաքանչյուր ոլորտի ընկերությունների և S/S-ների առանձնահատկությունները: Առանձին միջոցառումներ պետք է նախատեսել տեղական շուկաներում ապրանքներ վաճառող ըն-

կերությունների համար՝ հաշվի առնելով ՌԴ ռուբլու նկատմամբ ՀՀ դրամի տատանումները:

Գործազրկության նպաստների բացակայության պարագայում, որը համարվում է անմիջապես արտաքին շոկերին արձագանքելու առաջնային գործիքը տնտեսության հարմարվողականության տեսանկյունից, զբաղվածության նոր մոդելը որոշակիորեն կասեցմանափակի ՀՀ կառավարության կողմից ստեղծված իրավիճակին արդյունավետ կերպով արձագանքելու կարողությունը: Հետևաբար՝ արտաքին շոկերի հետևանքով բացասական ազդեցության հաղթահարման տեսանկյունից առաջնային է դառնում հանրային աշխատանքների ծրագրի իրականացումը, սակայն դրա մշակման համար որոշակի ժամանակ է պահանջվում: Ավտոմատ կայունացնող ծրագրերից միայն սոցիալական աջակցության ծրագրերի միջոցով է, որ ՀՀ կառավարությունը հաղթահարելու է ապագայում գրանցված արտաքին շոկերի հետևանքները, սակայն այս պարագայում հնարավոր է, որ ոչ բոլոր գործազուրկները բավարարեն շահառուների ընտրության չափանիշներին: Այս պարագայում ճգնաժամին ավելի արագ արձագանքելու նպատակով անհրաժեշտ է օրենսդրորեն ամրագրել գործազրկության նպաստի վճարումը միայն ճգնաժամերի դեպքում, և միայն ճգնաժամի պատճառով աշխատանքը կորցրածների համար:

2014թ.-ին կենտրոնական Կառավարության պարտք/նախորդ տարվա ՀՆԱ հարաբերակցությունը կազմում էր 49.3%՝ փաստելով այն մասին, որ Կառավարության հարկաբյուջետային միջոցառումներ իրականացնելու հնարավորությունը սահմանափակ է լինելու՝ շոկերին արդյունավետ արձագանքման կարողության տեսանկյունից, որի պարագայում անհրաժեշտ է մեծացնել ընդհանուր հարկային եկամուտների մեջ ուղղակի հարկերի մասնաբաժնի 2017-2018թթ.-ից սկսած (ՌԴ տնտեսության վերականգմանը զուգընթաց)՝ ՀՀ կառավարության պարտքի չափը կրճատելու նպատակով, որի շնորհիվ ՀՀ կառավարությունը կկարողանա իրականացնել խթանող քաղաքականություն, եթե միջնաժամկետ-երկարաժամկետ հատվածում գրանցվի ռեցեսիա, քանի որ մաքսատուրքերի վերաբաշխումից ստացվող գումարները, ինչպես նաև ներմուծմամբ պայմանավորված ավելացված արժեքի հարկերը տարեց տարի կրճատվելու են:

Չնայած նրան, որ 2010-2014թթ.-ին ՀՀ տնտեսությունը դեռևս առավելապես կախված էր ներքին պահանջարկից, այնուամենայնիվ, կախվածությունն արտաքին գործոններից (արտաքին պահանջարկից) զգալիորեն աճել էր, որի պարագայում ՀՀ կառավարության առաջնահերթություններից պետք է լինի ներդրումների խթանման ճանապարհով համախառն կուտակման իրական աճի տեմպերի բարձրացումը:

Տնտեսության ճկունության բարձրացման նպատակով՝ տնտեսական զարգացման հիմքի ավելի լայն բազմազանություն ապահովելու կտրվածքով, որը տնտեսության կառուցվածքի, ինչպես նաև ապրանքների արտահանման ավելի լայն դիվերսիֆիկացիա կապահովի, ինչն էլ իր հերթին կհանգեցնի ուղղակի հարկերի ավելացմանը և իրական հատվածի զարգացմանը առաջարկվել են մի շարք միջոցառումներ և քայլեր:

***«Եզրակացություններ» բաժնում*** ամփոփվել են ՀՀ տնտեսության իրական հատվածի վրա արտաքին տնտեսական գործոնների ազդեցությանը, ՀՀ տնտեսության մակրոտնտեսական խոցելիությունը նկարագրող ցուցանիշներին վերաբերող հետազոտության հիմնական արդյունքները: Եզրահանգումներից ելնելով կատարվել են մի շարք կիրառական և գործնական բնույթի առաջարկություններ: Դրանք են՝

- ԵԱՏՄ ինտեգրացիոն ներուժի իրացմամբ կիրառել դիվերսիֆիկացված տարածաշրջանային զարգացման մոտեցումը (ըստ գոտիների՝ Հյուսիսային, Արարատյան դաշտավայրի, հարավային և Երևանի). համաձայն որի՝ մարզերը քլաստերների զարգացման հիման վրա, իրենց աշխարհագրական դիրքից ելնելով, կկենտրոնանան մի քանի արտադրանքների արտադրության վրա,
- Որպես զարգացում ապահովող ընդհանուր ոլորտբոլոր տարածաշրջանների դեպքում զարգացնել թեթև արդյունաբերությունը: Վանաձորում, Գյումրիում կամ այլ քաղաքներում հիմնել ադյունաբերական հատուկ գոտիներ (որոնց կարող է տրվել նաև ազատ տնտեսական գոտու կարգավիճակ), որտեղ ընկերությունները կօգտվեն մի շարք հարկային արտոնություններից,
- Առաջնահերթություններից մեկը պետք է լինի նպատակային ակտիվ զբաղվածության ծրագրերի մշակումն և իրագործումը (աշխատուժի նկատմամբ պահանջարկի ավելացման և կլաստերների զարգացման միջոցառումների իրականացման պայմաններում),
- Առաջարկվել է ՀՀ-ում որակյալ մասնագետների պահպանման և դրանց ներգրավման խնդրի լուծման մոտեցում՝ «Լույս» ծրագրի շրջանավարտների մասնակցությամբ,
- Ներդրումային գործունեության խթանման նպատակով տրամադրել որոշակի հարկային արտոնություններ՝ ըստ գործունեության ոլորտի (հատկապես ցածր և միջին տեխնոլոգիական աշխատատար ոլորտներում, որոնք կունենան նաև արտահանման ուղղվածություն) և տարածաշրջանի (ինչպես նաև տարբերակված՝ ըստ քաղաքային կամ գյուղական բնակավայրի)՝ ելնելով գործազրկության մակարդակի ցուցանիշներից,

• Ներդրումների ներգրավմամբ արտահանման ծավալների մեծացման հաշվին ավելի դիվերսիֆիկացված տնտեսական աճ ապահովելու նպատակով իրականացնել երկրի բրենդինգի ռազմավարության մշակում և իրագործում: Առաջնահերթ պետք է լինի երկրի արժեքային առաջարկի մշակումը, որի վրա էլ հիմնված է լինելու բրենդինգի ռազմավարությունը: Երկրի դիրքավորման տեսանկյունից 2 ուղղություն է նշվել՝

➢ *Հարթակ դեպի Եվրասիական մայրցամաք*,
➢ *Զարգացած երկրներում սփյուռքահայ գործարարների արտադրամիության կենտրոն*:

• Առավելապես ԵԱՏՄ-ի ինտեգրացիոն ներուժի իրացման շրջանակներում զարգացող ոլորտներում սկսել արտադրել նաև ԵՄ և այլ զարգացած երկրների կանոնակարգերին համապատասխանող ապրանքներ,

• ՀՀ-ում տնտեսության տարբեր ոլորտների զարգացման նպատակով կարևորվում է նաև ԵԱՏՄ ինտեգրացիոն ներուժի իրացման շրջանակներում հատկապես միջինից բարձր և բարձր տեխնոլոգիական ոլորտներում արժեքային շղթայի որևիցե էլեմենտի ներգրավումը,

• Ազգային ինովացիոն համակարգի զարգացմանը զուգընթաց ԵԱՏՄ շրջանակներում գիտահետազոտական ներուժի զարգացման միջոցով միջինից բարձր և բարձր տեխնոլոգիական ոլորտներում նոր ապրանքների (ԵՄ և այլ զարգացած երկրներում մրցունակ) մշակում և արտադրություն:

**Ատենախտսության հիմնական դրույթները հրապարակվել են հեղինակի հետևյալ գիտական հրապարակներում.**


1. Մակարյան Ա., Ճգնաժամի մակրոտնտեսական ազդեցության գնահատման հայեցակարգային հիմքերը // (հանրապետական գիտաժողովի նյութեր) / ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտ: Պատ. խմբագիր՝ Վ.Լ. Հարությունյան.- Եր.: ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 2012, գիրք 2.- էջ 304-307:

2. Մակարյան Ա., Համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի փոխանցման ուղիների ազդեցությունը ՀՀ տնտեսության վրա, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 2014թ., 130 էջ:

3. Макарян А.Р., Роль новой модели политики занятости в снижении уровня безработицы в Республике Армения//Региональные проблемы преобразования экономики: ежемесячный научный журнал, - Мах.: РАН ДНЦ Институт социально-экономических исследований, Издательство: НП «Редакция журнала «Региональные проблемы преобразования экономики», 2014. - №4 (42)., с.148-153.

4. Մակարյան Ա., Ընթացիկ հաշվի պակասուրդ/ՀՆԱ հարաբերակցությունը որպես ՀՀ մակրոտնտեսական խոցե-

լիության ցուցանիշ //Հայաստան. Էկոնոմիկա և ֆինանսներ-Եր.: 2015. թիվ 3-4 (175-176), էջ 75-78:

5. Մակարյան Ա., ՀՀ տնտեսական աճը պայմանավորող գործոնների վերլուծությունը //Հայաստան. Էկոնոմիկա և ֆինանսներ-Եր.: 2015. թիվ 3-4 (175-176), էջ 68-70:

6. Մակարյան Ա., ՀՀ տնտեսական զարգացման արդյունավետությամբ պայմանավորված փուլի և Եվրասիական տնտեսական միությանն անդամակցության մարտահրավերներն ու հնարավորությունները տնտեսության խոցելիությունը նվազեցման գործում//«Այլընտրանք» եռամսյա գիտական հանդես. -Եր.: «Այլընտրանք» հետազոտական կենտրոն: 2015. թիվ 2 (ապրիլ -հունիս), էջ 177-192:

7. Մակարյան Ա., Մակրոտնտեսական խոցելիության գնահատման մոտեցումները արտերկրում և ՀՀ-ում//Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում (գիտական հոդվածների ժողովածու-2015)/ ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտ: Պատ. խմբագիր՝ Վ.Լ. Հարությունյան.- Եր.: ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 2015- էջ 342-349:

8. Makaryan, A.R., The real-side linkages and the vulnerability of real sectors of low-income countries and Armenia//Региональные проблемы преобразования экономики: ежемесячный научный журнал, - Мах.: РАН ДНЦ Институт социально-экономических исследований, Издательство: НП «Редакция журнала «Региональные проблемы преобразования экономики», 2015. - №11 (61)., с.154-161.

9. Makaryan, A.R., The role of imports and credits in explaining the macroeconomic vulnerability of Armenia// Региональные проблемы преобразования экономики: ежемесячный научный журнал, - Мах.: РАН ДНЦ Институт социально-экономических исследований, Издательство: НП «Редакция журнала «Региональные проблемы преобразования экономики», 2015. - №12 (62)., с.254-259.

10. Մակարյան Ա., Տնտեսության իրական հատվածի վրա արտաքին գործոնների ազդեցությունը և կարգավորման ուղիները //«Այլընտրանք» եռամսյա գիտական հանդես. -Եր.: «Այլընտրանք» հետազոտական կենտրոն: 2016. թիվ 1 (հունվար-մարտ), էջ 351-363:

11. Մակարյան Ա., ՀՀ տնտեսության ճկունության աստիճանի բարձրացումը տնտեսական զարգացման հիմքի բազմազանության ապահովման միջոցով //«Այլընտրանք» եռամսյա գիտական հանդես. -Եր.: «Այլընտրանք» հետազոտական կենտրոն: 2016. թիվ 1 (հունվար-մարտ), էջ 364-374:

**АННА РУЗВЕЛЬТОВНА МАКАРЯН**

# ПРОБЛЕМЫ МАКРОЭКОНОМИЧЕСКОЙ УЯЗВИМОСТИ И ПУТИ ИХ РЕГУЛИРОВАНИЯ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

Автореферат диссертации на соискание ученой степени кандидата экономических наук по специальности 08.00.02-«Экономика, управление хозяйством и его сферами».
Защита диссертации состоится 23 июня 2016г., в $14^{00}$ на заседании Специализированного совета 014 ВАК РА по экономике, действующего в Армянском государственном экономическом университете по адресу: 0025, г. Ереван, ул. М. Налбандяна 128.

## РЕЗЮМЕ

***Объект и предмет исследования.*** Объектом исследования является анализ влияния внешнеэкономических факторов на реальный сектор РА, а предметом – выявление путей повышения степени гибкости экономики РА.

***Цель и задачи исследования.*** Основной целью диссертации является исследование проблем макроэкономической уязвимости экономики РА и разработка путей их регулирования в среднесрочном и долгосрочном периодах. Для достижения этой цели в диссертационной работе поставлены и решены следующие задачи:

- исследовать связь между внешнеэкономическими факторами и реальным сектором экономики в странах с низким уровнем доходов в контексте макроэкономической уязвимости,
- изучить совокупность характеризующих макроэкономическую уязвимость факторов и их влияние на финансовые кризисы, а также основные подходы к ее оценке в РА и за рубежом,
- представить основные показатели, характеризующие макроэкономическую уязвимость экономики РА,
- провести статистический анализ факторов экономического роста РА в контексте макроэкономической уязвимости,
- исследовать связь реального сектора экономики РА и внешнеэкономических факторов, а также оценить воздействие этих факторов на экономический рост РА.

- проанализировать возможные пути повышения степени гибкости экономики для снижение макроэкономической уязвимости РА

***Основные научные результаты диссертации и их новизна.*** В результате проведенных в диссертационной работе исследований и анализа получен ряд теоретических, методических и практических результатов, из которых основные заключаются в следующем:

- Разработаны концептуальные модели для представления распространения процесса негативного влияния внешних шоков на реальный сектор экономики стран с низким уровнем доходов, а также Республики Армения,
- Обоснованы факторы, влияющие на изменение объемов реального импорта в среднесрочном периоде, а также выявлены факторы, содействующие темпам роста реального ВВП РА и обусловливающие рост производительности труда, на основе которых предложено в отраслях со средней и низкой степенью технологичности привлечь "затратно-ориентированные" и одновременно "рыночно ориентированные" ПИИ,
- Для повышения степени гибкости экономики РА предложены антикризисные и другие мероприятия (выплата пособий по безработице во время кризисов, разработка стратегии брэндинга страны, диверсификация регионального развития путем реализации интеграционного потенциала ЕАЭС) в направлении обеспечения более широкого разнообразия базы экономического развития.

**ANNA ROOSEVELT MAKARYAN**

# MACROECONOMIC VULNERABILITY ISSUES AND MEASURES TO ADDRESS THEM IN THE REPUBLIC OF ARMENIA

The abstract of the dissertation thesis for receiving the degree of Doctor of Economics in the specialty 08.00.02 –"Economics, Management of Economy and its Spheres."
The defense of the dissertation thesis will take place on June 23, 2016, at 14:00 o'clock, at 014 Council of Economics of the SCC RA at Armenian State University of Economics, 128 Nalbandyan Street, Yerevan 0025.

## ABSTRACT

***The Object and Subjects of the Research*:** The object of the dissertation thesis is the analysis of impact of the external economic factors on the real sector of economy; the subject is to identify approaches to ensuring a more resilient economy.

***The Purpose and Objectives of the Research:*** The main purpose of the dissertation thesis is to study macroeconomic vulnerability issues of the economy in the Republic of Armenia and propose measures to address them over the medium-term and the long-run. For this purpose the following objectives have been defined and met in the dissertation thesis:

- To study the real-side linkages between the economy and the rest of the world (external economic factors) in low-income countries within the context of macroeconomic vulnerability;
- To study the group of factors describing macroeconomic vulnerability and their role in causing financial crises, and main approaches to measuring macroeconomic vulnerability in the Republic of Armenia and abroad as well;
- To present the main indicators describing the macroeconomic vulnerability of the economy of the Republic of Armenia;
- To conduct a growth accounting exercise for the Republic of Armenia in the context of macroeconomic vulnerability;
- To study the real-side linkages between the economy of the Republic of Armenia and the rest of the world, and estimate their impact on the economic growth of the Republic of Armenia;
- To analyze possible approaches to increasing the resilience of the economy in order to reduce the macroeconomic vulnerability of the Republic of Armenia.

***The Main Research Results and Scientific Novelty of the Dissertation Thesis:*** The results of the study and analysis covered by the dissertation thesis are theoretical, methodological and applied and the scientific novelty of which are the followings:

- Conceptual frameworks have been designed in order to demonstrate how the negative impact of external shocks is transmitted to the real sector of economy in low-income nations and the Republic of Armenia;
- It has been justified which factors would affect the changes in the real imports over the medium-term, and the factors contributing to the real GDP growth rates in the Republic of Armenia and explaining the growth of productivity have been identified and based on these results it has been proposed to attract efficiency- and simultaneously market-seeking foreign direct investments into low- and medium-tech industries;
- In order to ensure higher resilience of the economy of the Republic of Armenia specific crisis response and a set of measures to be implemented have been proposed to reach a wider diversity of the economic base (to provide unemployment benefits in times of a crisis, to design the nation branding strategy, diversified regional development in the context of the EAEU integration potential).